Բանասիրական ֆակուլտետի խորհրդի հարգարժա՛ն անդամներ,

Խորհրդի հերթական նիստը կկայանա ս.թ. փետրվարի 1-ին, ժամը 14.30-ին:

Հանդիպման հղում՝ https://meet.google.com/gnx-ivtv-snb

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՄ-3 կուրսի մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփում:

   զեկուցող՝ Ա. Գալստյան

2. ՀԲ եւ ՀՄ կուրսերի 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացների մասին:

   զեկուցող՝ Ա. Գալստյան

3. ԱԲ-4 կուրսի պրակտիկայի պաշտպանության արդյունքների ամփոփում:

   զեկուցող՝ Լ. Գալստյան

4. ԲԿԾ եւ ՄԿԾ առկա ուսուցման երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստության մասին:

   ամբիոնների վարիչներ

5. Վ. Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մասնագետի գործունեության մասին:

   զեկուցող՝ Ս. Դանիելյան

6. Ընթացիկ հարցեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԼՍԵՑԻՆ՝ ՀՄ-3 կուրսի մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը:

Նշվեց, որ քննությունն անցել է բարձր մակարդակով: Միայն այս ֆակուլտետն է կարողացել հեռավար անցկացնել: Առաջին օրը Պրն. Երեմյանն է աշխատել հանձնաժողովի հետ: Մասնակցել է 22 ուսանող: Նրանց մեծ մասը ստացել են լավ, երկուսը գերազանց, մնացածը բավարար գնահատականներ: Աշխատանքներն ունեցել են մեթոդական ուղղվածություն: Մի քանիսը մինչ այդ չեն երաշխավորվել պաշտպանության: Դեկանն ընդգծեց, որ ինքը հանդիպել է հանձնաժողովի նախագահին, որը բարձր կարծիք է հայտնել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դեկանի զեկուզումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԼՍԵՑԻՆ՝ ՀԲ և ՀՄ կուրսերի 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը: Նշվեց, որ ՀԲ և ՀՄ քննություններն ընթացքի մեջ են: Հեռակայում բոլոր կուրսերում ապահովվել է ներկայություն: ՀԲ-1 և ՀԲ-5 կուրսերը հաճախել են 100 տոկոսով: Բացակայություններ կան 3-րդ կուրսում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դեկանի հաղորումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԼՍԵՑԻՆ՝ ԱԲ-4 կուրսի պրակտիկայի պաշտպանության արդյունքների ամփոփումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Գալստյանը: Նա նշեց, որ պրակտիկան կազմակերպվել է սիմուլյատիվ: Արդյունքում ունենք 15 գերազանց, 37 լավ, 20 բավարար գնահատականներ: Մեծ աշխատանք է կատարվել, վերահսկողությունը պատշաճ է եղել, մեթոդիստների աշխատանքը նույնպես:

Նա ավելացրեց, որ հեռակա կուրսերը նույնպես սիմուլյացիոն պրակտիկա են անցկացնում: Երկրորդ կիսամյակում ԱԲ-2 և ԱԲ-3 կուրսերը կգնան դպրոցներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ պրակտիկայի ղեկավարի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ԼՍԵՑԻՆ՝ ԲԿԾ և ՄԿԾ առկա ուսուցման երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալիտա Դոլուխանյանը, Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Սուրեն Դանիելյանը, Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ , բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը:

Աշոտ Գալստյանը նշեց, որ ռեկտորատից ցուցում ունի 2-րդ կիսամյակից որոշ օրեր դասերը կազմակերպել ֆակուլտետում: Բակալավրիատի 1-ին (երկուշաբթի), 2-րդ և 3-րդ կուրսերի (չորեքշաբթի) և մագիստրատուրայի 1-ին կուրսի (հինգշաբթի) ուսանողները մեկ օր գալու են ֆակուլտետ: Մնացյալ օրերը դասերն անցկացվելու են հեռավար: ԱԲ-4 և ԱՄ-2 կուրսերը ամբողջությամբ մնում են հեռավար:

Խնդիրները հիմնականում վերաբերում են Ջավախքի ուսանողներին, որոնք տրտնջում են:

Ա. Դոլուխանյանն ընդգծեց, որ իրենց ամբիոնը հունվարի 29-ին նիստ է գումարել և հաստատել երկրորդ կիսամյակի ԱՈՒՄՓ-ները, ամփոփել առաջին կիսամյակի քննությունների արդյունքները: Նա կարծիք հայտնեց հեռավար քննությունների վերաբերյալ, որոնք մեծ չափով կեղծ են, և ուսանողները արհեստականորեն ստանում են բարձր գնահատականներ:

Նա նշեց նաև, որ սեպտեմբերին նախատեսում են անցկացնել Ադոնցի 150 ամյակին նվիրված գիտաժողով:

Ս. Դանիելյանը նույնպես նկատեց, որ ամբիոնում նախապատրաստական աշխատանքները կատարված են: Չնայած բոլոր դասախոսները պարապել են պատասխանատվությամբ, էլեկտրոնային դասընթացներում վրիպումներ չեն եղել, սակայն գրավոր քննությունների ժամանակ ակնառու են զանգվածային արտագրությունների փորձերը: Ուսումնական գործընթացին զուգահեռ նախատեսում են մայիս ամսին իրագործել «Կյանքը և վեպի ընդգրկումները. ազդեցություններ և զարգացման ուղենիշներ» խորագրով միջազգային գիտաժողով:

Վ. Համբարձումյանն էլ տեղեկացրեց, որ իրենք նախատեսում են կազմակերպել գիտաժողով՝ նվիրված Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1660 ամյակին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դեկանի և ամբիոնների վարիչների հաղորդումներն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

ԼՍԵՑԻՆ՝ Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մասնագետի գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Սուրեն

Դանիելյանը և հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանը:

Ս. Դանիելյանն ասաց, որ Վեհանուշ Մուրադյանը ամբիոնում աշխատում է 2017-ից: Բավական հետևողական աշխատանքով նվաճել է ամբիոնի դասախոսների համակրանքը, օգտակար է լինում նրանց աշխատանքներում: Իր պարտականությունները կատարում է սիրով: Ունի նյութերի իմացություն, մարդկային բարձր նկարագիր: Ամենօրյա աշխատանքով շատ բանով նպաստում է ամբիոնի բարոյահեգաբանական խաղաղությանը, ինչ համար ամբիոնը հայտնում է գոհունակություն:

Ա. Դոլուխանյանը կարևորեց Վ. Մուրադյանի կատարած աշխատանքը միջամբիոնային համագործակցության առումով: Նա շեշտեց աշխատակցի համեստությունն ու պարտաճանաչությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ս. Դանիելյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

Հարց 1

ԼՍԵՑԻՆ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Մարգարիտ Հարությունի Ավետիսյանի գիտական ղեկավարի և թեմայի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ.Դոլուխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Մարգարիտ Հարությունի Ավետիսյանի գիտական ղեկավար նշանակել բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ

Վասիլի Հովսեփյանին, թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Ֆրիկի բանքերը ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր աղբյուրների»:

Հարց 2

ԼՍԵՑԻՆ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի «Նիկողայոս Ադոնցը՝ միջազգային ճանաչում ունեցող բյուզանդագետ ու հայագետ» նոր ժողովածուի տպագրության երաշխավորության և ժողովածուի հոդվածների թեմաների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ.Դոլուխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ «Նիկողայոս Ադոնցը՝ միջազգային ճանաչում ունեցող բյուզանդագետ ու հայագետ» ժողովածուն երաշխավորել տպագրության՝ հետևյալ բովանդակությամբ.

1. Նախաբան՝ եռալեզու
2. Դոլուխանյան Ա.Գ. – «Ն. Ադոնցը Հայաստանի պատմության մեջ եկեղեցու կատարած դերի մասին»:
3. Գալստյան Ա.Վ. – «Ն. Ադոնցը Մաշտոցյան գրերի գնահատող»:
4. Հովսեփյան Լ.Վ. – «Ն. Ադոնցի կատարած հայկական ձեռագրերի որոշ փաստերի ճշգրտումները»:
5. Դոլուխանյան Ռ.Վ. – «Ն. Ադոնցը Մուշեղ Իշխանի հուշերում»:
6. Մարդյան Գ.Ա. – «Նիկողայոս Ադոնցի մանկավարժական հայացքները»:
7. Գրիգորյան Մ.Հ. - «Ն. Ադոնցի նամակները՝ ուղղված տարալեզու պարբերականներին»:
8. Սարգսյան Հովհ.Մ. – «Ն. Ադոնցը Մովսես Խորենացու գնահատող»:

Հարց 3

ԼՍԵՑԻՆ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Վաչե Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Անուշ Լևոնի Ներսիսյանի գիտական ղեկավարի և ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Վաչե Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Անուշ Լևոնի Ներսիսյանի գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դավթի Դանիելյանին և Ժ. 01. 02 «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ թեմա հաստատել «Նիկողոս Սարաֆյանի ստեղծագործությունը»:

Հարց 4

ԼՍԵՑԻՆ՝ Վանաձորի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի հայցորդ Ռուզաննա Գրիգորի Հովասափյանի գիտական ղեկավարի և ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Վաչե Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Վանաձորի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի հայցորդ Ռուզաննա Գրիգորի Հովասափյանի գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դավթի Դանիելյանին և Ժ. 01. 02 «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ թեմա հաստատել «Գրական պայքարը Անդրանիկ Ծառուկյանի «Նաիրի հանդեսում»:

Հարց 5

ԼՍԵՑԻՆ՝ Բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Վոլոդյայի Գալստյանի «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական-21-րդ դ. 10-ական թթ.), գիրք Բ» մենագրության տպագրության երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Աշոտ Վոլոդյայի Գալստյանի «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական-21-րդ դ. 10-ական թթ.), գիրք Բ» մենագրությունը երաշխավորել տպագրության:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՇՈՏ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բանասիրական ֆակուլտետի խորհրդի հարգարժա՛ն անդամներ,

Խորհրդի հերթական նիստը կկայանա ս.թ. մարտի 9-ին, ժամը 15.00-ին:

Հանդիպման հղում՝ https://meet.google.com/itf-duwf-zdw

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության մասին:

զեկուցող՝ Ա. Գալստյան

2. Ֆակուլտետի ուսումնական գործընթացի, ուսանողների հաճախելիության եւ միջանկյալների մասին:

զեկուցող՝ Ն. Խաչատրյան

3. ԱԲ-2, ՀԲ-4 եւ ՀԲ-5 կուրսերի պրակտիկայի անցկացման եւ ԱԲ-3 կուրսի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների մասին:

զեկուցող՝ Լ. Գալստյան

4. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մասնագետի գործունեության մասին:

զեկուցող՝ Վ. Համբարձումյան

5. Ընթացիկ հարցեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի ԹԻՎ 2 ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԼՍԵՑԻՆ՝ 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը:

Նշվեց, որ քարոզչական աշխատանք են կատարել Ա. Դոլուխանյանը, Մ. Գիլավյանը, որն իր հայցորդներին՝ 5 հոգի, խնդրել է, որպեսզի իրենց դպրոցներում աշակերտներին ուղղորդեն մանկավարժական համալսարան: Գայանե Խալաթյանը տվել է թիվ 113 դպրոցից Արմինե Գեւորգյանի անունը: Էդվարդ Մկրտչյանին 11-րդ դասարանցի մի աղջիկ խոստացել է գալ բանասիրական ֆակուլտետ: Գեւորգ Էմինի դպրոցից երկու աշակերտներ դիմելու են պատմության, մեկը՝ օտար լեզուների, 3-ը կուլտուրայի ֆակուլտետներ: Նաիրա Խաչատրյանը քարոզչական աշխատանք է տարել Արթիկում, Սուսաննա Ղարիբյանը՝ Սեւանի ավագ դպրոցում, ուր 12-րդ դասարանի մեկ ուսանող դիմելու է նախադպրոցական կրթության ֆակուլտետ: Որոշ 11-րդ դասարանցիներ դեռ կողմնորոշված չեն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դեկանի զեկուզումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի ուսումնական գործընթացի, ուսանողների հաճախելիության եւ միջանկյալների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Նաիրա Խաչատրյանը: Նա ընդգծեց, որ ուսումնական գործընթացների հետ կապված խնդիրները հիմնականում վերաբերում են այլ բաժինների դասախոսների՝ երբեմն

անպարտաճանաչ հաճախումներին: Ամփոփվել են ամփոիչ քննությունների արդյունքները: Ունենք հեռացված ուսանողներ՝ 1-ը երկրորդ կուրսից՝ Անի Կոստանյանը, եւ 4-ը՝ 4-րդ կուրսից: Արդեն պատրաստ են երկրորդ կիսամյակի գրաֆիկները: Դասախոսները կարող են մուտք գործել եւ տեսնել: ԱԲ-4-ում երկրորդ միջանկյալը ապրիլի կեսերին է, ամփոփիչը՝ վերջին, իսկ լուծարքները՝ մայիսի սկզբին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դեկանի տեղակալի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԼՍԵՑԻՆ՝ ԱԲ-4 կուրսի պրակտիկայի պաշտպանության արդյունքների ամփոփումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Գալստյանը: Նա նշեց, որ ավարտվել են ՀԲ-4 եւ ՀԲ-5 կուրսերի պրակտիկաները: ԱԲ-2 եւ ԱԲ-3 կուրսերը գնում են դպրոցներ: ԱԲ-3-ի խնդիրն է առկախ, քանի որ վստահ չեն, որ դպրոցներում դասերը շարունակվելու են առկա եղանակով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ պրակտիկայի ղեկավարի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ԼՍԵՑԻՆ՝ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մասնագետի գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ , բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը:

Նա նկատեց, որ մասնագետ Ժենյա Հովհաննիսյանն աշխատում է 4-5 ամիս: Մեր ուսանողներից է, մագիստրանտ: Պատրաստակամ է: Պատասխանատու է նիստերի անցկացման, քաղվածքների կազմման համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

Հարց 1

ԼՍԵՑԻՆ՝ Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Սիրարփի Անաստասի Դավթյանի ատենախոսության թեմայի վերնագիրը («Ժամանականիշ բառերը արևելահայերենում և արևմտահայերենում») վերաձևակերպելու («Հայերենի բառապաշարի ժամանականիշ բառերի քննություն») մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Սիրարփի Անաստասի Դավթյանի ատենախոսության թեման հաստատել հետևյալ ձևակերպումով՝ «Հայերենի բառապաշարի ժամանականիշ բառերի քննություն»:

Հարց 2

ԼՍԵՑԻՆ՝ Հրանուշ Սուրենի Զաքյանի «Կրկնասեռությունը հայերենի բայական համակարգում» վերնագրով դոկտորական ատենախոսության վերաձևակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հրանուշ Սուրենի Զաքյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատել «Կրկնասեռության իմաստային-գործառական դրսևորումները հայերենում» վերաձևակերպումով:

Հարց 3

ԼՍԵՑԻՆ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի հեռակա մագիստրատուրայի 2020-2021 ուս.տարվա շրջանավարտ Վիկտորյա Մուրադի Սադոյանի «Ընդհանրությունները Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի և սերբական էպոսի միջև: Թեմայի ուսուցումը ավագ դպրոցում» մագիստրոսական թեզը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆ. Ալիտա Դոլուխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Վիկտորյա Մուրադի Սադոյանի «Ընդհանրությունները Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի և սերբական էպոսի միջև: Թեմայի ուսուցումը ավագ դպրոցում» մագիստրոսական թեզը երաշխավորել տպագրության:

Հարց 4

ԼՍԵՑԻՆ՝ Վանաձորի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի հայցորդ Ռուզաննա Գրիգորի Հովասափյանի գիտական ղեկավարի և ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Վաչե Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Վանաձորի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի հայցորդ Ռուզաննա Գրիգորի Հովասափյանի գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դավթի Դանիելյանին և Ժ. 01. 02 «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ թեմա հաստատել «Գրական պայքարը Անդրանիկ Ծառուկյանի «Նաիրի հանդեսում»:

Հարց 5

ԼՍԵՑԻՆ՝ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի բ.գ.թ., դոցենտ Ռուզան Ջուլֆայանի և մ.գ.թ., դոցենտ Սոֆի Թորգոմյանի «Բառակազմության ուսուցումը դպրոցական և բուհական դասընթացում (ուղեցույց ուսուցչին)» մեթոդական ձեռնարկը երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ , բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը:

Նշվեց, որ աշխատանքը համապատասխանում է ժամանակակից մեթոդաբանությանը, նախատեսված է ավագ դպրոցի աշակերտների, բուհի ուսանողների և ուսուցիչների համար, կարող է նպաստել բառակազմության արդյունավետ ուսուցմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ բ.գ.թ., դոցենտ Ռուզան Ջուլֆայանի և մ.գ.թ., դոցենտ Սոֆի Թորգոմյանի «Բառակազմության ուսուցումը դպրոցական և բուհական դասընթացում (ուղեցույց ուսուցչին)» մեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Հարց 6

ԼՍԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի կամավորական աշխատանք կատարած ուսանողներին պետական ավարտական քննություններին միավորներ ավելացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը: Նա ներկայացրեց հետեւյալ ուսանողների անունները եւ համապատասխան միավորները.

Սիմոնյան Էմմա Ահարոնի – 10 միավոր

Հովհաննիսյան Միլենա Արթուրի – 2 միավոր

Մարտիրոսյան Նելլի Գեւորգի – 2 միավոր

Ղալաչյան Անի Բագրատի - 9 միավոր:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ պետական ավարտական քննությունների ժամանակ վերոնշյալ ուսանողների ստացած գնահատականներին ավելացնել համապատասխան միավորներ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՇՈՏ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բանասիրական ֆակուլտետի խորհրդի հարգարժա՛ն անդամներ,

Խորհրդի հերթական նիստը կկայանա ս.թ. ապրիլի 13-ին, ժամը 14.30-ին:

Հանդիպման հղում՝ https://meet.google.com/pnc-tmug-svd

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետում ուսումնական գործընթացների կազմակերպման մասին:
   զեկուցողներ՝ Ա. Գալստյան
   Ն. Խաչատրյան

2. Ավարտական աշխատանքների եւ մագիստրոսական թեզերի նախապաշտպանության մասին:
   զեկուցողներ՝ Ն. Խաչատրյան
   ամբիոնների վարիչներ

3. Պրակտիկայի գործընթացի մասին:
   զեկուցող՝ Լ. Գալստյան

4. Բանասիրական ֆակուլտետի կայքի հրապարակումների մասին:
   զեկուցող՝ Ա. Գալստյան

5. Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մասնագետի գործունեության մասին:
   զեկուցող՝ Ա. Դոլուխանյան

6. Ընթացիկ հարցեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի ԹԻՎ 3 ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետում ուսումնական գործընթացների կազմակերպման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը, փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Նաիրա Խաչատրյանը:

Նշվեց, որ ուսանողների հաճախելիության գրաֆիկներում փոփոխություններ չկան: Հիմնականում հաճախում են օտար լեզուների դասընթացներին, որովհետեւ փոքր խմբերով են կազմակերպվում պարապմունքները: Պետական ավարտական քննական հանձնաժողովն էլ աշխատելու է հեռավար սկզբունքով:

Նաիրա Խաչատրյանն էլ նշեց, որ մեկնարկել է ԱԲ-4 կուրսի քննությունների երկրորդ փուլը: Մեծ թվով ուսանողներ լուծարքներ ունեն: Հեռավար պարապմունքները կազմակերպվում են պատշաճ մակարդակով: Խնդիրը վերաբերում է միայն էլեկտրոնային մատյանների լրացմանը, որը պետք է հետեւողականորեն անեն մասնագետները եւ բացակաների անունները ներկայացնեն դեկանատ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դեկանի եւ փոխդեկանի զեկուզումներն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԼՍԵՑԻՆ՝ Ավարտական աշխատանքների եւ մագիստրոսական թեզերի նախապաշտպանության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Նաիրա Խաչատրյանը, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալիտա

Դոլուխանյանը, Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Սուրեն Դանիելյանը, Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ , բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը:

Մայիսի սկզբին պետք է ավարտական աշխատանքները եւ մագիստրոսական թեզերը պատրաստ լինեն պաշտպանության, որպեսզի տրվեն ընդդիմախոսներին: Մայիսի վերջին նախատեսվում է պաշտպանությունը:

Ա. Դոլուխանյանը դժգոհեց, որ հաճախ ուսանողները փորձում են բողոքել եւ դիպլոմ ստանալ, ինչը չի կարելի թույլ տալ: Վ. Համբարձումյանն էլ նկատեց, որ 3-4 հոգի իրենց ամբիոնում չեն երաշխավորվել պաշտպանության: Ս. Դանիելյանն ընդգծեց օտար երկրներում գտնվող ուսանողների խնդիրը, որոնք շատ հաճախ անտեղյակ են մնում աղբյուրներին, իսկ նրանց հրավիրելը անհնարին է դարձել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դեկանի տեղակալի եւ ամբիոնների վարիչների հաղորդումներն ընդունել ի գիտություն եւ հնարավորինս հետեւողական լինել ուսանողների կատարած աշխատանքների որակին եւ գնահատմանը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԼՍԵՑԻՆ՝ Պրակտիկայի գործընթացի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Գալստյանը: Նա նշեց, որ Երեւանի դպրոցներում ընթացքի մեջ են ԱԲ-2 կուրսի ճանաչողական եւ ԱԲ-3 կուրսի կիրառական պրակտիկաները: Վերջինը մեկնարկել է ապրիլի 6-ին: Ավետիսյան դպրոցը 10 օրով փակ է լինելու: Ապրիլի 16-ին, 29-ին եւ 30-ին նշանակված են ՀԲ-4 եւ ՀԲ-5 կուրսերի պաշտպանությունները, որոնք անցկացվելու են առցանց:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ պրակտիկայի ղեկավարի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ԼՍԵՑԻՆ՝ Բանասիրական ֆակուլտետի կայքի հրապարակումների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը: Նա նկատեց, որ բանասիրական ֆակուլտետում կատարվում է գիտական բավական ծավալուն աշխատանք, որը, սակայն, առանձնապես արտացոլված չէ կայքում: Նա հորդորեց դասախոսական կազմին վերախմբագրել իրենց մասին եղած նյութը եւ ավելացնել հրապարակումների մասին տեղեկատվությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դեկանի հանձնարարականն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

ԼՍԵՑԻՆ՝ Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մասնագետի գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալիտա Դոլուխանյանը:

Նա ընդգծեց Արևիկ Աբրահամյանի բարձր մասնագիտական պատրաստվածությունը: Պատահական չէ, որ նա 3 տարի 0.5 դրույքով աշխատել է իբրեւ դասախոս: Ժամանակին հանձնել է ասպիրանտուրայի մինիմումները, նաեւ մասնագիտական քննությունը: Մասնագիտականի կողքին բացառիկ մարդկային հատկանիշներ ունի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչի հաղորդումն ընդունել է ի գիտություն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՇՈՏ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ

ԱՊՐԻԼԻ 30-Ի ԹԻՎ 4 ՆԻՍՏ (ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԼՍԵՑԻՆ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ **Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ** Տիգրան Բորիսի Միքայելյանին՝ Համալսարանի հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկվելու երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը, հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անցամ, բ.գ.դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը, Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել **բ.գ.թ., դոցենտ** Տիգրան Բորիսի Միքայելյանին՝ ընդգրկվելու Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի կազմում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՇՈՏ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բանասիրական ֆակուլտետի խորհրդի հարգարժա՛ն անդամներ,

Խորհրդի հերթական նիստը կկայանա ս.թ. հուլիսի 2-ին, ժամը 11.00-ին:

Հանդիպման հղում՝ https://meet.google.com/but-xitj-yna

ՕՐԱԿԱՐԳ

7. Ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:

զեկուցող՝ Ա. Գալստյան

8. Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքների մասին:

զեկուցող՝ Ա. Գալստյան

9. 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության մասին:

զեկուցող՝ Ա. Գալստյան

10. Առկա բակալավրիատի եւ մագիստրատուրայի միջանկյալ եւ ամփոփիչ քննությունների մասին:

զեկուցող՝ Ն. Խաչատրյան

11. Պրակտիկայի գործընթացի մասին:

զեկուցող՝ Լ. Գալստյան

12. Ընթացիկ հարցեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի ԹԻՎ 5 ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը (հաշվետվությունը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դեկանի զեկուզումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԼՍԵՑԻՆ՝ Ամփոփիչ ավարտական քննությունների արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը, հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆ., բ.գ.դ. Մարտին Գիլավյանը, Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը:

Դեկանը նկատեց, որ հիմնականում ուսանողները հանդես բերեցին գիտելիքների ընդունելի մակարդակ: Հանձնաժողովի նախագահ պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանը ընդհանուր առմամբ գոհ է եղել, բայց նաեւ արել է որոշակին առաջարկներ, որոնք պետք է քննարկել: Նախ, աշխատանքներում եղել են տեխնիկական բնույթի սխալներ: Որոշ թեմաների մեջ առկա են եղել անգամ ուղղագրական սխալներ: Թերացումներ կան մասնագիտական գրականության ցանկերի հետ կապված: Բանավոր խոսքը թույլ է. կառչում են թղթերից: Շատերը դժվարանում են պատասխանել լրացուցիչ հարցերի: Իրարամերժ կարծիքներ են հնչում աշխատանքների վերաբերյալ. հատկապես գնահատականներում ուշադիր պիտի լինեն ընդդիմախոսները:

Մտահոգիչ է եզրակացությունների բովանդակային կողմը. հիմնականում հայտնում են ընդհանուր դասագրքային մտքեր: Բացի այդ՝ նյութերը պետք է հնարավորինս մոտեցնել դպրոցական ծրագրերին:

Մարտին Գիլավյանն առաջարկեց թեմաների պահուստային ֆոնդ ստեղծել:

Վազգեն Համբարձումյանն էլ նկատեց, որ աշխատանքների մեծ մասը լեզվական իրողությունների նկարագրություններ են, որոնք հիմնականում եղած գրականությունից արտագրություններ են:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնել դիտարկումներն ու հնարավորինս ուշադիր լինել աշխատանքների ղեկավարման եւ գնահատականների հարցերում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԼՍԵՑԻՆ՝ 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը: Նա նշեց ԱՄ անվճար համակարգ ընդունված ուսանողների անունները.

Լիլիթ Վարդանյան

Կարլեն Նազարյան

Անի Քերոբյան

Նելլի Մարտիրոսյան:

Մյուս կուրսերում ընդունելությունը դեռեւս ընթացքի մեջ է:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դեկանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ԼՍԵՑԻՆ՝ Առկա բակալավրիատի եւ մագիստրատուրայի միջանկյալ եւ ամփոփիչ քննությունների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Նաիրա Խաչատրյանը:

Նա հաղորդեց, որ ԱԲ-3 կուրսն ունի լուծարքներ 5 առարկայից: Դրանք կանցկացվեն սեպտեմբեր ամսին: Նույն կուրսում կան նաեւ 12 կրեդիտի պարտք ունեցող ուսանողներ: ԱԲ-2 կուրսում 5 առարկայից են լուծարքները, ԱԲ-1-ում՝ 8:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ փոխդեկանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

ԼՍԵՑԻՆ՝ Պրակտիկայի գործընթացի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը:

Նշվեց, որ պրակտիկայի կազմակերպման հարցերում ֆակուլտետը խնդիրներ չունի: Համալսարանի պրակտիկայի բաժնի վարիչ Հասմիկ Առաքելյանը նույնպես բարձր է գնահատում ֆակուլտետում տարվող աշխատանքները: Հաջորդ նիստում ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար Լուսինե Գալստյանը կներկայացնի պրակտիկայի արդյունքների ամփոփումը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ դեկանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

Հարց 1

ԼՍԵՑԻՆ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական բաժանմունքի Վաչե Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Աննա Մարատի Սարգսյանի «Դարասկզբի մտավորականության գեղարվեստական քննության փորձը Զապել Եսայանի վիպաշխարհում» թեկնածուական ատենախոսության թեմայի՝ «Մտավորականության գեղարվեստական քննության փորձը Զապել Եսայանի վիպագրության մեջ» խորագրով վերանվանման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Վաչե Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հայցորդ Աննա Մարատի Սարգսյանի «Դարասկզբի մտավորականության գեղարվեստական քննության փորձը Զապել Եսայանի վիպաշխարհում» թեկնածուական ատենախոսության թեման վերանվանել «Մտավորականության գեղարվեստական քննության փորձը Զապել Եսայանի վիպագրության մեջ» խորագրով:

Հարց 2

ԼՍԵՑԻՆ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Արտաշես Ռեդիկի Մարտիրոսյանի «Անձերի անվանումներ» բառաիմաստային դաշտի զարգացումը աշխարհի հայկական լեզվապատկերում» վերնագրով դոկտորական ատենախոսության թեման հաստատելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը:

9. **ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել Արտաշես Ռեդիկի Մարտիրոսյանի «Անձերի անվանումներ» բառաիմաստային դաշտի զարգացումը աշխարհի հայկական լեզվապատկերում» վերնագրով դոկտորական ատենախոսության թեման:

Հարց 3

ԼՍԵՑԻՆ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի հեռակա մագիստրատուրայի 2020-2021 ուս. տարվա շրջանավարտ Հովհաննես Մանվելի Սարգսյանի «Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության

դաստիարակչական արժեքը» խորագրով մագիստրոսական թեզը որպես առանձին գրքույկ տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ գիտական ղեկավար, Հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հովհաննես Մանվելի Սարգսյանի «Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության դաստիարակչական արժեքը» խորագրով մագիստրոսական թեզը որպես առանձին գրքույկ երաշխավորել տպագրության:

Հարց 4

ԼՍԵՑԻՆ՝ Արցախի պետական համալսարանի հայ գրականության եւ ժուռնալիստիկայի ամբիոնի 3-րդ տարվա հայցորդ Մանուշ Էմիլի Բալայանի «Ռոպեր Հատտեճյանի ստեղծագործության գեղագիտությունը» թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ գիտական ղեկավար, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Վաչե Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել հայցորդ Մանուշ Էմիլի Բալայանի «Ռոպեր Հատտեճյանի ստեղծագործության գեղագիտությունը» թեկնածուական ատենախոսության թեման:

Հարց 5

ԼՍԵՑԻՆ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական բաժանմունքի Վաչե Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կազմակերպած «Կյանքը եւ վեպի ընդգրկումները.

ազդեցություններ եւ զարգացման ուղենիշներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Վաչե Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ «Կյանքը եւ վեպի ընդգրկումները. ազդեցություններ եւ զարգացման ուղենիշներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն երաշխավորել տպագրության:

Հարց 6

ԼՍԵՑԻՆ՝ Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի հայցորդ Հասմիկ Արամի Խաչատրյանի «Խոսքի զարգացման հիմնախնդիրը միջին դպրոցում» վերնագրով ատենախոսության թեման վերահաստատելու հարցը (գիտական ղեկավար՝ բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ վերահաստատել Հասմիկ Արամի Խաչատրյանի ատենախոսության թեման հետևյալ խորագրով՝ «Խոսքի զարգացման հիմնախնդիրը միջին դպրոցում»:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՇՈՏ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ (ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ)

ԼՍԵՑԻՆ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ **գիտահետազոտական կենտրոնի ղեկավար, հ.գ.դ., պրոֆեսոր Կամո Երեմի Վարդանյանին հ**ամալսարանի կառավարման խորհրդի կազմում ընդգրկվելու երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը, հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անցամ, բ.գ.դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը, Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել **հ.գ.դ., պրոֆեսոր Կամո Երեմի Վարդանյանին՝** ընդգրկվելու համալսարանի կառավարման խորհրդի կազմում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՇՈՏ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բանասիրական ֆակուլտետի խորհրդի հարգարժա՛ն անդամներ,

Ս.թ. հոկտեմբերի 21-ին, ժամը 14.20-ին, տեղի կունենա ֆակուլտետի խորհրդի հերթական նիստը՝ հետեւյալ հղումով. https://meet.google.com/gpz-vrgy-dqa

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի 2021-2022 ուստարվա ուսումնական գործընթացների մասին:
զեկուցող՝ Աշոտ Գալստյան

2. Ավարտական աշխատանքների եւ մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում:
ամբիոնների վարիչներ

3. Լուծարային շրջանի ամփոփում:
զեկուցող՝ Նաիրա Խաչատրյան

4. ԱԲ-2 եւ ԱԲ-4 կուրսերի պրակտիկաների ընթացքի մասին:
զեկուցող՝ Լուսինե Գալստյան

5. Ընթացիկ հարցեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի 2021-2022 ուստարվա ուսումնական գործընթացների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը:

Ֆակուլտետն աշխատել է սեպտեմբերից գործող դասացուցակով: Առաջին կուրսեցիները մեկ ամիս եկել են դասի: Հոկտեմբերի 1-ից յուրաքանչյուր կուրսի մեկ օր հրավիրել ենք համալսարան: Այդպես ենք նպատակահարմար գտել, քանի որ ռեկտորատը այդ հարցը թողել է ֆակուլտետների հայեցողությանը: Բայց հանգամանքների բերումով ամբողջապես անցել ենք հեռավար ուսուցման: Կային ֆակուլտետներ, որոնք գտնում էին, որ չեն կարող հեռավար աշխատել, բայց այս պահին ամբողջ հանրապետությունն անցել է հեռավար ուսուցման: Մենք վերահսկում ենք գործընթացը, եւ բացթողումներ չեն լինում: Սա մեզ համար նորություն չէ, եւ այս խնդրում ունենք հաջողություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ֆակուլտետի դեկանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԼՍԵՑԻՆ՝ Ավարտական աշխատանքների եւ մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ հայ հին եւ միջնադարյան գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆ. Ելիտա Դոլուխանյանը, Վաչե Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանը, հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Վազգեն Համբարձումյանը, բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը:

Ելիտա Դոլուխանյանը նշեց, որ իրենց ամբիոնում թեմաները հաստատել են նախ նախորդ ուսումնական տարվա ավարտին՝ հուլիսի 2-ին, վերահաստատել հոկտեմբերի 1-ի նիստում (ԱԲ-4, ՀԲ-5 եւ ԱՄ-1, ՀՄ-1 կուրսերի թեմաները կցվում են):

Սուրեն Դանիելյանի հաղորդմամբ՝ հոկտեմբերի 18-ի նիստում հաստատել են ԱԲ-4 թեմաները (կցվում են): Նա նշեց, որ այս անգամ ելել են գիտական բաղադրիչի պահանջից, եւ թեմաների որոշ մասը խորագրում չունեն մեթոդական ձեւակերպում:

Ֆակուլտետի դեկանն ընդգծեց, որ պիտի պահպանել համամասնությունը դպրոցական ծրագր

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ֆակուլտետի դեկանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՇՈՏ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ

ՆՈՅԵՄԲԵՐ 22-Ի ՆԻՍՏԻ

(ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ)

ԼՍԵՑԻՆ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Վոլոդյայի Խոեցյանին ՀՊՄՀ ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Աշոտ Գալստյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Վոլոդյայի Խոեցյանին երաշխավորել՝ մասնակցելու **ՀՊՄՀ ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթին**:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՇՈՏ Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔՆԱՐԻԿ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բանասիրական ֆակուլտետի խորհրդի հարգարժա՛ն անդամներ,

Ս.թ. դեկտեմբերի 20-ին, ժամը 14.20-ին, տեղի կունենա ֆակուլտետի խորհրդի հերթական նիստը՝ հետեւյալ հղումով. https://meet.google.com/prq-ustv-anz

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի ուսումնական գործընթացների մասին:

   զեկուցող՝ Աշոտ Գալստյան

2. 2022-2023 ուստարվա ընդունելության մասին:

   զեկուցող՝ Աշոտ Գալստյան

3. Առաջին կիսամյակի քննաշրջանի եւ երկրորդ կիսամյակի ուսումնական աշխատանքների կազմակերպման մասին:

   զեկուցող՝ Նաիրա Խաչատրյան

4. Պրակտիկայի գործընթացի մասին:

   զեկուցող՝ Լուսինե Գալստյան

5. Հայցորդների ատեստավորման մասին:

   ամբիոնների վարիչներ

6. Ընթացիկ հարցեր: